

Նախաբան

«Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2013» ժողովածուն ընդգրկում է ՀՀ պետական ֆինանսների վիճակագրությունը, ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների գործունեության ցուցանիշները, դրամավարկային միջնորդության համակարգը բնութագրող վիճակագրական տվյալները, արտարժույթների փոխարժեքները, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի և այլ ֆինանսական կազմակերպությունների ամփոփ ցուցանիշները:

Պետական ֆինանսների վիճակագրության տեղեկատվական բազան ձևավորվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը (ՀՀ ԱՎԾ) տրամադրած պետական և համայնքների բյուջեների կատարման մասին հաշվետվությունների, ինչպես նաև ՀՀ ներքին և արտաքին պետական պարտքի մասին տվյալների հիման վրա:

Կազմակերպությունների ֆինանսների վիճակագրությունը ներառում է ՀՀ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքների, ինչպես նաև՝ հաշվարկների վիճակի վերաբերյալ տեղեկություններ: Տվյալների հավաքագրումն իրականացվել է ընտրանքային մեթոդով ընտրված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Կազմակերպությունների ընտրությունը կատարվել է ՀՀ ԱՎԾ բիզնես-ռեզիստրի գործող կազմակերպություններից բաղկացած արդիականացված բազայի հիման վրա:

Կազմակերպությունները, ըստ աշխատողների թվաքանակի բաժանվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և փոքր ու գերփոքր կազմակերպություններ: 1304 խոշոր և միջին կազմակերպությունները հետազոտվել են համատարած, իսկ փոքր և գերփոքր կազմակերպություններից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի ընտրվել են 974 կազմակերպություն: Հետազոտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա:

Ժողովածուի այդ մասում ներկայացված են 2011 և 2012 թթ. կազմակերպությունների ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2) բաժինների: Նախորդ տարիների վիճակագրական ժողովածուներում կազմակերպությունների ցուցանիշները դասակարգվում էին տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի խմբ. 1.1 (ՏԳՏՀԴ 1.1) բաժինների: Համադրելիության համար 2011թ. ցուցանիշները վերադասակարգվել են ըստ (ՏԳՏՀԴ խմբ. 2) դասակարգչի բաժինների:

Դրամավարկային միջնորդության համակարգի, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են ըստ ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված տվյալների:

Ժողովածուն հրապարակվում է հայերեն և անգլերեն:

Մեթոդաբանական պարզաբանումները ներկայացված են ժողովածուի յուրաքանչյուր բաժնի սկզբում:

Foreword

“Finance Statistics of Armenia, 2013” handbook covers statistics of government finance of RA, financial indicators of non financial commercial organizations activity, statistical data characterizing money and credit intermediation system, exchange rates and aggregated data of insurance companies, securities market and other financial organizations.

Information base of government finance statistics has been formed based on the reports on implementation of state and municipal budgets, as well as data domestic and external public debt submitted by the Ministry of Finance of RA to the National Statistical Service of RA (NSS RA).

Finance statistics of organizations includes information on results of economic activity of commercial organizations of RA, as well as situation on settlements. Data collection has been implemented by the sample method of organizations through the collection of state statistical reports. Sampling of organizations has been implemented based on the updated base of acting organizations of the NSS RA business-register.

According to the number of employees organizations are divided into 2 groups: large and medium-sized, small and micro-sized organizations. 1304 large and medium-sized organizations have been surveyed entirely, 974 organizations have been selected from small and micro-sized organizations (from the sampling general population) by the method of stratified sampling by marzes, main type of activity and average roll number of employees. Data on surveyed small and micro-sized organizations have been extrapolated on the sampling general population,

In this section of the handbook data for 2011 and 2012 have been presented by sections of the classification of types of economic activities (NACEA rev. 2). For previous years financial indicators of organizations were classified by sections of the classification of types of economic activities (NACEA rev 1.1). For comparability financial indicators of organizations of 2011 were reclassified by the classification of types of economic activities (NACEA rev . 2).

Indicators characterizing activity of money and credit intermediation system, insurance companies, securities market and other financial organizations have been presented according to data provided by the Central Bank of RA.

Handbook is published in Armenian and English.

Methodological explanatory notes have been presented at the beginning of each section of the handbook.